

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

15-ր մայիսի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Չաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

- 1. Ուսումնական խորհրդատուի հաշվետվություն:*
/գեկ. Բ. Վ. Օթարյան/
- 2. Ընդունելության համապատասխանություն աշխատաշուկային:*
/գեկ. Մ. Ա. Չաքարյան/
- 3. 2014-15թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում և գրաֆիկի հաստատում:*
/գեկ. Մ. Ա. Չաքարյան/
- 4. Տեղեկատվական ռեսուրսների չափանիշների արդյունավետության և մատչելիության վիճակի քննարկում:*
/գեկ. Ռ. Ռ. Քամայան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի գիտխորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Չաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Չաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին Մ. Ա. Չաքարյանը զեկուցման համար ձայնը տվեց ֆակուլտետի ուսումնական խորհրդատու Բ. Վ. Օթարյանին:

Նա ներկայացրեց, որ իրականացվում է ուսանողների հաճախումների վերահսկողություն, դասաժամերի իրականացման, ուսումնական պրոցեսի հետ կապված բոլոր աշխատանքները: Կան ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներ, որոնց հետ ամբիոնը կամ տվյալ առարկայի դասախոսը կատարում է անհատական աշխատանք: Ուսման բարձր առաջադիմություն ապահովելու համար ուսանողների աշխատանքի համեմատական արդյունավետության

բարձրացումն է, որ անհրաժեշտություն է ուսման բարձր որակի և առաջադիմության ապահովման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ս. Գասպարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Ռ. Ռ. Քամալյանը: Նրանք ուսումնական խորհրդատուի ներդրումը ֆակուլտետում բարձր գնահատեցին, քանի որ դեկանատի և ամբիոնների հետ համատեղ նրանք կատարում են իրենց պարտականությունները և առաջարկեցին նրանց կատարած աշխատանքը գնահատել «լավ»:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ֆակուլտետի ուսումնական խորհրդատու Բ. Վ. Օթարյանի կատարած աշխատանքը գնահատել «լավ»:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Նա ներկայացրեց, որ բազմիցս քննարկվել է ընդունելությունը աշխատաշուկային համապատասխան կազմակերպելու անհրաժեշտությունը. Նորացվել են մասնագիտությունները՝ ժամանակակից պահանջների համապատասխան:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ներկայացրեց 2014-15 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը, որը կազմվել է համապատասխան ուսումնական պլանի:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

Օրակարգի չորրորդ հարցի մասին զեկուցուվ հանդես եկավ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ Ռ. Ռ. Քամալյանը: Նա ներկայացրեց «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», մասնագիտության կարևորությունը տեղեկատվական տեխնոլոգիաների չափանիշների արդյունավետության գործում:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**